

**ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ա.
ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ**

21) Ի՞նչ կը պահանջուի չափահաս մկրտութեան՝ Ս. մկրտութեան համար:

Մկրտութիւնը փրկութեան ճանապարհին սկիզբն է, բայց վերջնական փրկութեան համելու համար կը պահանջուի միշտ կենդանի պահել Ս. մկրտութեան խորհուրդով ստացած չնորհքները:

Երկրորդ նախապայմանը ապաշխարութիւնն է, ինչպէս Ս. Պետրոս առաքեալը կը յորդորէ. «Ապաշխարեցէք եւ ձեզմէ իւրաքանչիւրը թող մկրտուի Տէր Յիսուս Քրիստոսի անունով մեղքերու թողութեան համար եւ պիտի ընդունիք Ս. Հոգիի պարգելը» (Գործք 2/38): Այսինքն մարդ պէտք է անդրադառնայ իր անցած կեանքին:

22) Ո՞վ կրնայ մկրտուիլ հայոց եկեղեցւոյ մէջ:

Հայոց եկեղեցւոյ Ս. Աւագանին մէջ կրնան մկրտուիլ ազգութեամբ հայեր, մեր եկեղեցւոյ անդամի հետ ամուսնացող եւ ամուսնացած օտարազգիներ, հայ ընտանիքներու կողմէ որդեգրուած երեխաներ, ինչպէս նաեւ այլադաւաններ եւ այլակրօնքներ:

Ովքեր սահմանուած կարգով անցած են խորհուրդի համար անհրաժեշտ նախապատրաստական ուսուցողական շրջանը, ընդունած եւ խոստովանած մեր դաւանանքը:

**ԱՊԱՇԽԱՐԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**

**ԲԱՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՆ-ՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ**

13. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Այդ գիտակցութեամբ ալ քրիստոնեայ անհատը պէտք է յարգէ պետական իշխանութիւնները եւ հնազանդի անոնց՝ պետական քաղաքական գործերու մատակարարման մէջ, այդ ձեւով անուղղակիօրէն իր հպարտութիւնը յայտնելով Աստուծոյ:

Այսքանով չեն վերջանար Եհովայի վկաներու քմահամ բացարութիւնները եւ Աստուածաշունչի պարզ ու վճիտ ձմարտութեան դէմ զացող ստութիւնը, բայց այսքանը աւելիով կը բաւէ ցոյց տալու, թէ իրենց հրամցուածքնենաւորուած «աւետարան» մըն է, որմէ կը զգուշացնենք բոլոր ճշմարիտ աստուածապաշտները: Անպայման կարդացէք նշուած համարները եւ դուք անձամբ հաստատեցէք, որպէսզի «գիտնաք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» չարին դրդումով իրենց լարած որոգայթներէն (Հմմտ. Յովհ. 8.32):

Որովհետեւ ճշմարտութիւնը հիմն ու խարիսխն է մեր հաւատքին ու մեր փրկութեան եւ ճշմարտութիւնը զիտնալը անհրաժեշտ է:

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ թերքը ամեն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, Եկեղեցիներու բանկակին մօս: Նաև՝ Facebook-ի վրայ փնտուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապասեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՏՐԱԳ Է ՈՒ ԽՎԻՇԵՐՈՒՄ ԼՈՅ
(Ս. 119.105)

ԺԱ. ՏՄՐԻ

ԿԻՐԱԿԻ, 4 ՆՈՅԵՄԲԵՐ 2018

ԹԻՒ 44

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես.22.15-25: ԵՓ 1.1-14:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱԿԱՆ ԸՆՏ ՂՈՒԿԱՍՈՒ 8.17-21

Զկայ ծածուկ բան մը, որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը՝ որ չզիտցուի եւ երեւան չգայ: Ուրեմն ուշադիր եղէք, թէ ինչպէս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողին պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի:

Յիսուսի նայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խուն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայր ու եղբայրներդ դրուսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել»:

Յիսուս ըսաւ. «Մայր ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:

ՊՈՂՈՍ ԱՌԱՋԵԱԼԻ ՆԱՍԱԿԱՆ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ 1.1-14

Օրինեալ է Աստուած, մեր Տիրոց Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով մեզ օրինեց երկինքի մէջ ամէն տեսակի հոգեւոր օրինութեամբ: Անիկա աշխարհի գոյութենէն իսկ առաջ մեզ ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն պատկանելու համար որպէս սուրբ եւ անարատ ժողովուրդ եւ իր սիրով մեզ նախասահմանեց Յիսուս Քրիստոսի ձեռքով իր որդիները ըլլալու, որովհետեւ այդ էր իր կամքը եւ ծրագիրը:

Ուստի գովենիք զինք այն փառքին համար, որ մեզի շնորհեց իր սիրելի Որդիին միջոցաւ: Արդարեւ, անո՞վ փրկուեցանիք եւ անոր արիւնով մեր մեղքերուն քողութեամբ: Ո՞րքան մեծ է իր շնորհքը, որ առատորէն տուաւ մեզի ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Որովհետեւ իր կամքին համաձայն մեզի յայտնեց շատ կանուխէն պատրաստ իր ծրագիրը, որ Քրիստոսով պիտի իրագործուի: Եւ այդ ծրագիրը սաէ, որ երբ ժամանակները իրենց լրումին հասնին, Քրիստոս իրմով պիտի բովանդակէ ամէն ինչ որ կայ երկինքի մէջ եւ երկրի վրայ:

Աստուած, որ Քրիստոսով ամէն ինչ կը յաջողեցնէ ըստ իր առաջադրած ծրագիրին եւ կամքին, սկիզբէն իրաւիրեց մեզ իր ժողովուրդը ըլլալու եւ իր փառքը գովերգելու: Մենք, որ Քրիստոսի յուսացողներուն առաջիններէն եղանիք: Դուք ալ, երբ լսեցիք նշանակած Քրիստոսի յուսացուած Սուրբ Հոգիով կնքուեցաք: Եւ Սուրբ Հոգին գրաւական է՝ թէ պիտի ժառանգենիք Աստուծոյ խոսումը, եւ որպէս իր կողմէ փրկուած ժողովուրդ՝ իր փառքը գովերգենիք:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՅՈՎՃԱՆԻՍ ՈՍԿԵԲԵՐՄԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

Պատրիարք Կ. Պոլսոյ՝ հայր եւ վարդապետ եկեղեցւոյ: Ծնած է 347-ին, Անտիոքի մէջ եւ մեռած է 14 Մեպտեմբեր, 407-ին:

Կանուխին կրթուած արտաքին գիտութեանց մէջ եւս, ճարտարախօսութեան դասատու ունենալով Լիբանիոսի նման հռետոր մը: Անտիոքի եպիսկոպոսը, Ս. Մելիտոս, զայն դաստիարակեց, մկրտեց եւ ընթերցող ըրաւ: Յովհաննէս յետոյ նոյն քաղաքին մօտակայ լեռները քաշուեցաւ, եւ վաղեմի մենակեացի մը ուղղութեան տակ անձնատուր ըլլալով ուսումնասիրեց Սուրբ Գիրքը, աղօթքի եւ ինքնաչարչութեան: Յետոյ թաքչեցաւ քարայրի մը մէջ, ուր մնաց երկու տարի, որմէ վերջ իր առողջութիւնը հարկադրեց զինքը դառնալ Անտիոք: Մելիտոս՝ սարկաւագ ձեռնադրեց, իսկ Փլարիանոս՝ անոր յաջորդը, քահանայութեան կոչեց զայն, եւ քարոզութիւն ալ տուաւ անոր: Պաշտօն՝ զորայդ միջոցին միայն եպիսկոպոսները կրոնային ունենայ:

398-ին, հակառակ իր կամքին, յաջորդեց Կ. Պոլսոյ Նեկտարիոս պատրիարքին, եւ այդ ատենէն իր անձին վրայ փայլեցուց բարի եւ ընտիր հովապետի մը առաքինութիւնները:

Ան բարեկարգեց կղերը, կանոնաւորեց աղքատներու ինսամքը, կառուցել տուաւ հիւանդանոցներ, եւ այնքան ուժգնորէն ծանրացաւ մեծամեծներուն աղքանութեան, ամբարտաւանութեան եւ ցոփ կենցաղին դէմ, որ 403-ին գահընկէց եղաւ Կաղնեաց Ժողովէն եւ Բիւթանիա աքսորուեցաւ:

Բայց իր մեկնումին գիշերը, Կ. Պոլսոյ մէջ այնպիսի ահաւոր երկրաշարժ մը պատահեցաւ, որ կայսրուհին զարհուրած, իր ամուսինէն արտօնութիւն ստացաւ Սուրբը ետ կանչել տալու: Բայց այս անգամ, ա՛լ աւելի խիստ կերպով քարոզեց արքունիքի զեղխութեանց դէմ. ուստի, Արկադիոսի եւ Եւղոքսիայի որոշումով, վերստին գահազուրկ եղաւ եւ աքսորուեցաւ նախ Հայաստան, Կոկիսոն, յետոյ Կոմանա, ուր Ս. Բասիլիսկոսի վկայարանին մօտ վախճանեցաւ՝ վերջին անգամ Ս. Խորհուրդը մատակարարելէ ետք: Իր մարմինը Կ. Պոլիս փոխաղուեցաւ 434-ին, իր աշակերտին՝ Պրոկոփի պատրիարքութեան օրով: Իր գրականութիւնը, կը ներառէ Պատարագ մը, Ս. Գրոց մեկնութիւններ, քահանայութեան վրայ ճառ մը եւ բազմաթիւ քարոզներ, որոնց մեծ մասը հայերէնի թարգմանուած են Ե. դարու ընտրելագոյն գրաբարով: Անոնք եկեղեցւոյ հայրերուն ամենէն մեծարժէք գործերը կը ներկայացնեն:

ԱՂՈԹՔ Ս. ԲԱՐՍԵՂԵՆ (Օգտակար դառնալու խնդրանը)

Սորվեցո՞ւր մեզի, ո՞վ Տէր, տեսնել եւ օգտագործել ծառայութեան ամէն պատեհութիւն: Թող ըլլանք տուողներ՝ առանց փոխարժեքը հաշուելու, պայքարողներ՝ առանց վիրաւորելու, աշխատողներ՝ առանց հանգիստ փնտոելու, ծառայողներ՝ առանց վարձատրութիւն ակնկալելու, այն գիտակցութեամբ թէ քու կամքը է որ կը կատարենք. ամէն:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ՉԱՐԻԵՆԵՐԵ, ՊԱՏՈՒԽԱՍՆԵՐԵ ԵՒ ՎԱՆԳՆԵՐԵ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՐՊԱՍՈՒԹԻՒՆԸ ԽՆԴՐԵԼ

Չար մարդիկ կը սպառնա՞ն կեանք...
Աստուծոյ ապաւինիր, որովհետեւ ան
օրու անքուն պահապանու է:

Տիրոջ հրեշտակը աստուածավախ մարդոց կողին պահակ կը կանգնի եւ փորձանեներէն զանոնի կ'ազատէ: «Ուղորմէ ինծի, ով Աստուած, ողորմէ ինծի, որովհետեւ քեզի ապաւինեցայ, քու թեւերուդ հովանիին տակ պիտի ապաստանիմ, մինչեւ անցնի պատուհասը: Բարձրեալ Աստուծոյ կ'աղաղակեմ, որ իր օգնութիւնը դրկէ ինծի: Երկինքէն օգնութիւն կը դրկէ եւ կը փրկէ զիս, եւ կը նախատէ անոնի որոնի կեանքիս կը սպառնան»: Սաղմու 57

Անոր՝ Բարձրեալին, ամենակարողին պաշտպանութեան տակ կը մտնէ, անոր հովանիին տակ հանգիստ կը գտնէ: «Իր թեւերով պիտի ծածկէ քեզ եւ իր հովանիին տակ ապաստան պիտի գտնես: Տէրը քեզի համար իր հրեշտակներուն պիտի պատուիրէ, որ պահպաննեն քեզ ուր որ ալ երթաս: Իրենց ձեռքին վրայ պիտի բռնեն քեզ, որպէսզի չըլլայ որ ոտքդ քարի մը զարնուի»: Սաղմու 91

«Օգնութիւնս Տիրոջմէ պիտի գայ, որ արարիչն է երկներին ու երկրին: Անիկա թոյլ պիտի չտայ որ փորձանի մէջ իյնաս, որովհետեւ քու անքուն պահապան է ան: Արդարեւ ան չի նեցեր եւ չի քնանար, ինք քեզ պիտի պահէ ամէն չարիքէ եւ քեզ պիտի պահպանէ»: Սաղմու 121

ՀՈԳԵԱՆՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԿԻՐԱԿԻ ՕՐԸ ՏԻՐՈԶ ՄԵԶ ՀԱՆԳՉԵԼՈՒ ՕՐ Է

«Բնաւ չդադրինք պաշտամունքի հաւաքոյթներուն մասնակցելէ...» (Եբր. 10.25): Աստուածային հրահանգ է, որ Աստուծոյ զաւակները միշտ եկեղեցի յանախնեն: Ուեւ մէկը թող չպատճառաբանէ, թէ ինք շատ զբաղած է եւ հետեւարար եկեղեցի չի կրնար երթալ Կիրակի օրերը: Յիսուսէն աւելի՞ զբաղած ենք: Յիսուս մնայուն կերպով տանար կը յանախէր: Ան ուզեց օրինակ դառնալ մեզի: Մէկը թող չըսէ, թէ ինք շաբաթը վեց օր կ'աշխատի եւ եղած չեղածը մէկ օր ունի հանգիստի, այդ ալ Կիրակի օրն է: Ո՞ւր կ'ուզես հանգիստ ընել կամ ո՞ւր կը գտնես հանգիստ: Պատշգամ դրուած խորովածին դիմա՞ց, անկողինի՞ մէջ, կլկլակին առշե՞ւ: Ա՞յս է քեզի համար հանգիստը: Յիսուս չըսա՞ւ, որ եթէ իրեն գաս քեզի հանգիստ պիտի շնորհէ (Մտք. 11.28): Զե՞ս հաւատար իր տուած խոստումին:

ՍԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՈԹԵՆՔ

Հրամայէ', Տէ՛ր, որ անդամալոյդին պէս առողջանամ, մէկ կողմ նետեմ ցաւերու անկողինը, Տիրոջ տան մէջ շրջիմ քու կամարաբներուդ հետ և Աստուծոյ գալիքին մէջ ծաղկիմ ու շմեղանչեմ:

Խորտակէ', Տէ՛ր, սատանային բռնութիւնը, մէկի նետէ անոր զօրութիւնը, արգիլէ՛ անոր յարձակումը վրաս, որպէսզի մարմինս ընդունայն վարելով՝ չտանի լայն ճամբով, որ կորուստի եւ ապականութեան կը տանի:

Եփրեմ Ասորի